Ինչպես վերը հիշատակեցինք Մշո Տոնականի պրակների մի մասի թերթաքանակը խայտաբղետ է։ Սովորաբար յուրաքանչյուր ձեռագրի պրակների քանակը կայուն է լինում, և եթե երբևէ թերի է կազմվում որևէ պրակ, գրիչը զգուշացնում է այդ մասին, բնագիրը թերի չդիտելու համար։ Այսպես. Գևորգ Սկևռացին 1267 թ. ընդօրինակած իր ձեռագրում ԺԲ պրակի ստորին լուսանցքում զգուշացնում է. «այս տետրս Դ թուղթ է», որովհետև մյուս բոլոր տետրերը կամ պրակները 12-ական թուղթ ունեին։ Հատկապես յոթ թերթանոց պրակ անհնարին է կազմել, որովհետև պրակի թերթաքանակը պետք է զույգ լինի։ Բայց Մշո Տոնականում այն հնարավոր է եղել։ Այստեղ պրակները կազմելիս թերթերը ամբողջությամբ, առանց երկտակելու դրվել են իրար վրա և ոչ թե ծալվել ու դրվել իրար մեջ։

Եթե այդպես է, հնարավոր էր, որ որոշ պրակներ, նույնիսկ կենտ թերթաքանակ ունենային և որոշ խախտումներ լիներին նրանց միօրինակության մեջ, ինչպես և կա։

Տոնականի 600 մագաղաթյա թերթերը, եթե նկատի ունենանք նրանց մեծությունը, բավականին պատկառելի քանակ են կազմում, որպեսզի այսօր էլ հիացնեն և զարմացնեն դիտողին, քանի որ այն ստացվել է այդքան մատաղաշ արջառների մորթիներից և վկայում է մագաղաթի պատրաստման արվեստի կատարելությունը միջնադարյան Հայաստանում։

## Բ

Մշո Տոնականը նշանավոր է ոչ միայն ծավալային մեծությամբ, այլ նաև իր բովանդակության հարստությամբ։ Այն պարունակում է ներբողյաններ և վարդապետական ճառեր, թղթեր և պատմական բովանդակությամբ ընտիր հատվածներ, մեկնություններ, կանոններ, վարքեր, վկայաբանություններ և այլն, և այլն։ Նրան նախորդող Տոնականներից մեզ հասած ամենահարուստը Տիվրիկի Նեղկուկ գյուղում 1194 թ. ընդօրինակվածն է, որը 233 նյութ-միավոր ունի[9], իսկ նրանից հետո 1307 թ. Ղրիմում ընդօրինակվածը՝ 287[10]։ Այնինչ Մշո Տոնականի նյութ-միավորների քանակը, չնայած իր կորած մասերի[11], 327-ի է հասնում[12]։ Միայն ճառերի և ներբողյանների հեղինակները անցնում են քառասունից։ Մի այդքան էլ մյուս նյութերի հեղինակներն են։ Բազմաթիվ նյութեր է պարունակում Տոնականը Գրիգոր Լուսավորչից, Սահակ Հայրապետից, Եղիշեից, Մովսես Խորենացուց, Դավիթ փիլիսոփայից, Սեբեոսից, Աբրահամ Մամիկոնեից եպիսկոպոսից, Զաքարիա կաթողիկոսից, Սահակ կաթողիկոս Գ. Զորափորեցուց, Իգնատիոս վարդապետից և հայազգի այլ մատենագիրներից։

Տոնականի նյութերից շատերը նշանավոր են իրենց հնությամբ, նույնիսկ եզակիությամբ։ Հիշենք մի քանիսը. «Ի պատմութենէ Հերակղի. վասն աւերածոյն Երուսաղէմի եւ տանելոյն ի գերութիւն զսուրբ փայտ խաչին Քրիստոսի

---

[9] *F. Macler*, Cataloque des manuscrits arméniens... de la Bibliothèque National, Paris, 1908, էջ 48—54, ձեռ. № 110։

[10] Անդ, էջ 57—61, ձեռ. № 116—118։

[11] «Երանելոյն Զաքարիայի հայոց կաթողիկոսի...» ճառին, որ կրում է ՃԿԶ համարը, հաջորդող ճառը ՃԿԷ համարն ունի և սկսվում է նոր էջից «Նորին Յոհանու ասացեալ...» ճառով։ Նշանակում է դրանց միջև եղած թերթը պարունակել է մի ուրիշ ճառ Հովհաննես Ոսկեբերանից, որ այժմ չկա։

[12] Հաշվի մեջ են նաև Վենետիկում գտնվող թերթերում պարունակվող ութ ճառերը։